Հայտարարություն

Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր
Վարկ թիվ 5398-ԱՄ

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Սոցիալական պաշտպանվածության վարչարարության երկորդ ծրագիր» վարկային ծրագրի շրջանակում **Տեղեկատվական համակարգերի գծով մասնագետի** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Հանձնարարականի նպատակն է շահառուներին և ԾՀԳ-ի մասնագետներին ցուցաբերել Տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման գծով անհրաժեշտ մասնագիտական աջակցություն՝ համակարգելով Ծրագրով նախատեսված ՏՏ համապատասխան ենթածրագրերի իրականացումը և ապահովելով դրանց ժամանակին և արդյունավետ կատարումը:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից՝ վեց ամսվա ընթացքում՝ երկարացման հնարավորությամբ:

ՏԱՀՏ գծով մասնագետը պետք է ունենա՝

- բարձրագույն կրթություն ՏՏ ոլորտում՝ տեղեկատվական համակարգերի նախագծման, կառավարման կամ Ծրագրային ապահովության բնագավառում, կամ հարակից այլ ոլորտներում (ֆիզիկամաթիմատիկական գիտություններ և այլն), մագիստրոսի աստիճանը ցանկալի է,
- տեղեկատվական համակարգերի վերլուծության, կիրառման, նախագծման և մշակման, փորձարկման և փաստաթղթավորման առնվազն հինգ տարվա փորձ,
- ծրագրային ապահովման միջավայրի (ինտերֆեյս, համապատասխանեցում, աշխատանքային ընթացք ու ընդլայնում և այլն) իմացություն և հաջող փորձի առկայություն,
- ժամանակակից տեղեկատվական համակարգերի և տվյալների բազայի կառավարման իմացություն,
- կազմակերպչական և մարդկանց հետ հաղորդակցվելու անհրաժեշտ հմտություններ,
- հայերենի և անգլերենի՝ գրավոր և բանավոր լավ իմացություն:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **սույն թվականի հունիսի 05-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տ.Մեծ 4
Հեռախոս. (037410) 528742, (037411) 910581
Ֆաքս. (037410) 545-708
Էլ. փոստ. info@ffpmc.am